ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 13.06.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից նյութերը պարզեց հետևյալը.

1. «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բարվա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.06.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի նախապատմությունը և փաստերը.

1. ՀՀ Արագածոտնի մարզպետարանը հրապարակել է հայտարարել է հրավեր և հայտարարություն /ծածկագիր՝ ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17/ հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով:

2. Հրավերով բացման նիստի օր է սահմանվել 04.04.2017թ.:

3. Բացման նիստի արձանագրությունը կազմվել է 05.04.2017թ.:

4. Հայտերը բացվել են 04.04.2017թ. և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է հայտարարվել գնային առաջարկով «Լոկատոր» ՓԲԸ-ն:

5. 05.04.2017թ. թվագրմամբ /հայտերի բացման արձանագրության կազմման օրը/ Պատվիրատուն գրություն է կազմել և ուղարկել «Լոկատոր» ՓԲԸ-ին՝ պահանջելով ներկայացնել որակավորման չափորոշիչները հիմնավորող, հրավերով պահանջված փաստաթղթերը, տեխնիկական պայմանները պայմանագիր կնքելու նպատակով:

6. Հրավերով սահմանվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ներկայացնել այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել, որը Մասնակիցը՝ «Լոկատոր» ՓԲԸ-նչի ներկայացրել:

7. Բացման նիստի արձանագրությամբ սահմանվել է հաջորդ նիստի հրավիրման ժամկետ՝ բացման նիստից ոչ ուշ քան երրորդ օրը, որը չի կայացել և դրա վերաբերյալ չի հրապարակվել համապատասխան արձանագրություն:

8. 09.06.2017թ. հրապարակվել է ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշում:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

Գտնում ենք, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն.

«2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն.

«2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»:

Նշված նորմերից հետևում է, որ գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից այնպես, որ պահպանվեն մրցակցային ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները և ապահովվեն թափանցիկությունը, արդյունավետությունը:

Հրավերի 2-րդ և 4-րդ ենթակետի համաձայն.

«4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինն ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ տեխնիկական միջոցների առկայության մասին.

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինն ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները.

Հրավերի 3.1 կետի համաձայն. «նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և նույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին aragatsotn.gyugh@mta.gov.am է ուղարկում նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում

մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունված կողմի գրավոր հավաստումը:

գ) այն տեխնիկական տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել:»:

Հրավերի 7.5 կետի համաձայն.

«Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղն զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ «aragatsotn.gyugh@mta.gov.am», է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղն զբաղեցրած Մասնակցին:

Հրավերի 11.1 կետի համաձայն՝ Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը նույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն. «Ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:»:

ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 45-52-րդ կետերով սահմանվում են հայտերի բացման և մասնակցի ընտրության /մրցույթի հաղթողի/ արձանագրման կարգը. մասնավորապես՝

Կարգի 47-52 կետերի համաձայն.

«47. Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

3) ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

47.1. Մրցակցային, ինչպես նաև սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերություններով նախատեսված հիմքերով գնման գործընթացների կազմակերպման դեպքում քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

48. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

49. Նույն կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Նույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

50. Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկան անշարժ գույքը կամ

ավիասպասարկման ծառայությունն է, և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրակացության համաձայն առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ապա առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

51. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

52. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն նիստի բացման օր է սահմանել 04.04.2017թ., սակայն արձանագրությունը թվագրված է 05.04.2017թ., բացման նիստից հետո Պատվիրատուն չի պահպանել որոշմամբ սահմանված ժամկետներին հաջորդող գործողությունների կատարման համար, մասնավորապես՝ 04.04.2017թ. բացման նիստից հետո պետք է ոչ ուշ քան երեք աշխատանքային օրը հրավիրեր նիստ, այսինքն՝ 07.04.2017թ., որը չի կատարել: Նիստը հրավիրվել է 10.04.2017թ., որից հետո պարզելով առաջին տեղն զբաղեցրած մասնակցի անհրաժեշտ փաստաթղթերի՝ **այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել (հրավերի 3.1 կետ)**, չներկայացնելու փաստը չի մերժել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկելով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը այլ անհամապատասխանությունների հիմնավորումներն ստանալու համար ժամկետի խախտմամբ դիմել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին պարզաբանում ստանալու նպատակով:»:

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված նորմերից հետևում է, որ բացման նիստից հետո, եթե անհամապատասխանություն է լինում մասնակիցների ներկայացված փաստաթղթերում, ապա Պատվիրատուն մեկ օրով կասեցնում է նիստը և հրապարակվում gnumner.am կայքում՝ առաջարկելով շտկել թերությունները, իսկ այդպիսին չլինելու դեպքում նշվում է առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցների տվյալները:Առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկվում է երեք աշխատանքային օրյա ժամկետում ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը, այդ թվում՝ որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը: Պահանջվող փաստաթղթերը չներկայացվելու դեպքում Պատվիրատուն **մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին և առաջարկում է հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին ներկայացնել նշված փաստաթղթերը**:

Ընկերությունը գտնում է, որ նշված գործողություններով Պատվիրատուն խախտել է ոչ միայն ընթացակարգը, այլ Ընկերության ակնկալիքը և կատարվելիք աշխատանքների ժամկետները:

Ընկերությունը նշել է, որ ընթացակարգը հրապարակվել է արտակարգ և անկանխատեսելի անհրաժեշտությունից ելնելով:

Ընկերությունը գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով մրցույթի 09.06.2017թ. կայացված մրցույթի ընտրված մասնակից ճանաչելու, պայմանագիր կնքելու մասին որոշումը և «Բարվա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից կամ չեղյալ հայտարարել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգը:

Ընկերությունը ի լրումն բողոքում նշված հիմքերի, գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից 2017թ. ապրիլի 5-ին գրություն է ուղղարկվել առաջին տեղը զբաղեվրած «Լոկատոր» ՓԲԸ-ին որակավորման չափանիշները հաստատող փաստաթղթերը ներկայացնելու համար, այդ թվում նաև առաջարկվող հակակարկտային կայանի տեխնիկական պայմանները:

Պատվիրատուն նաև այդ տեխնիկական պայմանների չստացման պայմաններում առանց գնահատման վերջինիս ճանաչել է հաղթող:

«Լոկատոր» ՓԲԸ-ն որպես Լոկատոր ՀԱԳ-120 հակակարկտային կայանի տեխնիկական բնութագիր, որը ըստ էության նույնացվում է պայմանների հետ, հայտարարության մեջ ներկայացրել է տվյալներ ոչ թե առաջարկվող հակակարկտային կայանի այլ հրավերի տեխնիկական բնութագրի տեքստի /բովանդակության/ կրկնօրինակը /copy paste/, այսինքն՝ իրականության չհամապատասխանող տվյալներ /տեխնիկական պայմանները ներկայացվում է կից համադրման համար/:

Լոկատոր ՀԱԳ-120 հակակարկտային կայանի տեխնիկական պայմաններում մեկ կրակոցի համար անհրաժեշտ վառելանյութի համար նշված է 5-15գ. /հրավերով նախատեսված է ոչ ավել քան 5-10գ./ և 8000-24000 կրակոց /հրավերով պահանջվել է ոչ պակաս 20000-24000 կրակոց/: Ներկայացվածը համեմատելով և գնահատելով պետք է հաշվարկել հետևյալ կերպ՝ 15գ. գազի ծախսի դեպքում 8000 կրակոց: Հրավերով սահմանված առավելագույն 10գ. գազի ծախսի դեպքում Լոկատոր ՀԱԳ-120 մակնիշի կայանը կարող է կրակել լավագույն դեպքում 16.000 հատ: Ստացվում է, որ նշված կայանի պայմանները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Հրավերով նախատեսված է արևային մարտկոցի հզորությունը ոչ պակաս 40 Վտ, սակայն Լոկատոր ՀԱԳ-120 հակակարկտային կայանի տեխնիկական պայմաններում նշված է ոչ պակաս 30 Վտ, ինչը նույնպես անհամապատասխանություն է հրավերի պահանջներին:

Հրավերով հստակ սահմանվել է, որ երկաթբետոնե հիմքի չափերը պետք է լինեն 250 սմ x 180 սմ, այնինչ Լոկատոր ՀԱԳ-120 հակակարկտային կայանի տեխնիկական պայմաններում՝ Հավելված Բ-ում /համակարգի եզրաչափքեր/ հիմքի չափերը նշված են 6000 մմ x 3500 մմ, այն է 600 սմ x 350 սմ, ինչը նույնպես անհամապատասխանություն է հրավերի պահանջներին:»:

Ընկերությունը հարկ է համարել նշել, որ նմանատիպ հարց քննվել է ԳԲԽ-30/15 բողոքի շրջանակներում, որտեղ մասնավորապես անդրադարձ է կատարվել այն խնդրի վրա, որ ընկերության տեխնիկական պայմաններում համազարկերի թիվը նշված է եղել ոչ պակաս 15000 հատ, իսկ հրավերով սահմանված է եղել ոչ պակաս 20000 հատ, ինչը արձանագրվել է Խորհրդի կողմից որպես խախտում և 02.09.2015թ. Խորհրդի կողմից կայացված որոշմամբ ընթացակարգը հայտարարվել է ապօրինի:

Խորհրդում N ԳԲԽ-ԷՍ-2017/15 բողոքի քննության նիստին մասնակցում էին Վարդանյան Արմանը և Գասպարյան Վահագնը: Վերջիններս բողոքը պնդեցին ամբողջությամբ:

2. <u>ՀՀ Արագածոտնի մարզպետարան կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Խորհրդին ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով բողոքի ընթացքում ներկայացված բոլոր փաստարկները, այդ թվում բողոքաբեր ընկերության կողմից ներկայացված Լոկատոր ՀԱԳ-120 հակակարկտային կայանի տեխնիկական պայմանները պարզվել է, որ կան որոշակի անհամապատասխանություններ նշված հակակարկտային կայանի տեխնիկական բնութագրի և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի միջև:

Մասնավորապես.

1. Լոկատոր ՀԱԳ-120 հակակարկտային կայանի տեխնիկական պայմաններում մեկ կրակոցի համար անհրաժեշտ վառելանյութի համար նշված է 5-15գ. /այնինչ հրավերով նախատեսված է ոչ ավելի, քան 5-10 գ./ և 8000-24000 կրակոց/ հրավերով պահանջվել է ոչ պակաս 20000-24000 կրակոց/: Ներկայացուցչի համեմատությունից և գնահատումից ստացվում է, որ նշված կայանի պարամետրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

2. Հրավերով նախատեսված է կայանի արևային մարտկոցի հզորությունը ոչ պակաս 40 Վտ, այնինչ Լոկատոր ՀԱԳ-120 հակակարկտային կայանի տեխնիական պայմաններում նշված է ոչ պակաս 30 Վտ, ինչը նույնպես անհամապատասխանություն է հրավերի պահանջներին:

3. Հրավերով հստակ սահմանվել է, որ երկաթբետոնե հիմքի չափերը պետք է լինեն 250 սմ x 180 սմ, այնինչ Լոկատոր ՀԱԳ-120 հակակարկտային կայանի տեխնիկական պայմանների Հավելված Բ-ում /համակարգի եզրաչափքեր/ հիմքի չափերը նշված են 6000 մմ x 350 սմ, ինչը նույնպես անհամապատասխանություն է հրավերի պահանջներին:»

Խորհրդում N ԳԲԽ-ԷՍ-2017/15 բողոքի քննության նիստին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ Ա. Ավետիսյանը, Հ. Ստեփանյանը և Ա. Գրիգորյանը:

<u>3. ԳԲԽ-ԷՍ-2017/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդը ուսումնասիրել է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 13.06.2017թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի ներկայացրած փաստաթղթերը, N «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հայտարարելու միջոցով բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), N «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.04.2017թ. և 09.04.2017թ. կայացած նիստերի արձանագրությունները, Պատվիրատուի, «Բարվա» ՍՊԸ-ի և «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչների ներկայացրած դիրքորոշումները և կարծիքները.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հայտարարելու միջոցով բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Կազմակերպված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովը 05.04.2017թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5.1 կետով Ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչել «Լոկատոր» ՓԲԸ-ին:

05.04.2017թ. Հանձնաժողովը ծանուցել է «Լոկատոր» ՓԲԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 20.04.2017թ. ժամը 12:00-ն ՀՀ արագածոտնի մարզպետարանի գնումները համակարգողին ներկայացնել որակավորման չափորոշիչները հիմնավորող՝ Հրավերով պահանջված փաստաթղթերը, տեխնիկական պայմանները՝ պայմանագիր կնքելու նպատակով:

Հանձնաժողովը 09.06.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Լոկատոր» ՓԲԸ-ի առաջարկել է կնքել պայմանագիր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով՝ անգործության ժամկետ է սահմանել պայմանագիրը կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 10.06.2017թ.-14.06.2017թ.:

«Բարվա» ՍՊԸ-ն Խորհրդում կայացած բողոքի քննության նիստում հայտնեց, որ Հանձնաժողովը բավարար գնահատելով «Լոկատոր» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները՝ խախտել է Հրավերով սահմանված պահանջները, քանի որ Հրավերով սահմանվել է, որ Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշը գնահատվում է բավարար, եթե վերջինս Պատվիրատուի էլեկտրոնային փոստին՝ aragatsotn.gyugh@mta.gov.am, է ուղարկում նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին՝ մասնավորապես պետք է կցեր այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել, ինչը «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից չի ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 2-րդ մասի 1)-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև ներկայացվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:
- 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի

պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

• 52-րդ կետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

Հրավերի՝

• 3.1 կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և նույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին «aragatsotn.gyugh@mta.gov.am» է ուղարկում նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.

բ) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ) այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել:

• 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

• 5-րդ հավելվածով սահմանվել է, որ Մասնակիցը ներկայացնում է «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Խորհուրդը արձանագրում է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից Հանձնաժողովին չի ներկայացվել Հրավերի 3.1 կետի գ) ենթակետով պահանջվող այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել:

Խորհուրդը արձանագրում է նաև, որ Հանձնաժողովը Կարգի 51-րդ և Հրավերի 8.1.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան չի առաջարկել ընկերությանը նույն կետերով նախատեսված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինիս Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելով, խախտել է

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Կարգի 51-րդ և 52-րդ կետերով, ինպես նաև Հրավերի 8.1.2 և 8.1.3 կետերով սահմանված պահանջները:

Նշված խախտման առկայության պայմաններում Խորհուրդը չի անդրադառնում բողոքում ներկայացված այլ պահանջների և հիմնավորումների քննարկմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 13.06.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել N «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հայտարարելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2017թ. թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ